Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահ
Արա Զոհրաբյանի 18.01.2016թ. թիվ 08-Լ որոշմամբ

* * * * *

Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 35 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից Ռայմոն Եզեգելյանից տրամադրվող նվիրաբերության գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:
2. «Ռայմոն Եզեգելյան» թոշակի շահառու է համարվում սույն կարգին համապատասխան որոշված Երևան քաղաքի փաստաբանը (**այսուհետ՝ Շահառու**):
3. Շահառուների քանակը չի կարող գերազանցել 35-ը (երեսունհինգ) (**այսուհետ՝ Շահառուների քանակ**):
4. «Ռայմոն Եզեգելյան» թոշակը նախատեսում է մեկ Շահառուի համար մեկ տարվա անդամավճարի վճարում, որպես՝ կանխավճար:

* * *

II. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
   - Պալատի նախագահի խորհրդական միջազգային հարաբերությունների գծով,
   - Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար,

- Պալատի գանձապահ:

6. Հանձնաժողովը՝
   - ստուգում է Շահառուների թեկնածուների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.
   - հաստատում է Շահառուների ցանկը և ներկայացնում է Պալատի ֆինանսական տնօրենին:
7. Շահառուներին որոշելու համար Հանձնաժողովն՝ ըստ ստորև նշված առաջնահերթության, նախապատվությունը տալիս է Երևան քաղաքի հետևյալ փաստաբաններին՝
   7.1. 60-69 տարեկան փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել տարիքով փաստաբաններին).
   7.2. 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին).
   7.3. Երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին).
   7.4. Մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբաններին՝ **ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան** (մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբան է համարվում այն փաստաբանը, ում՝ ամուսինը (կինը), հայրը, մայրը, քույրը, եղբայրը, որդին կամ դուստրը նույնպես հանդիսանում է փաստաբան և տվել է իր համաձայնությունը ընտանիքի մյուս անդամին Շահառու գրանցելու համար (ընտանիքի անդամներից կարող է գրանցվել միայն մեկը). այս խմբում նախապատվությունը տրվում է ընտանիքի առավել մեծ տարիքով անդամներին):
8. Եթե սույն կարգի 7-րդ կետում նշված մեկ կամ ավելի խմբում Շահառուների տեղերի ավելացման դեպքում, այդ տեղերը պետք է բաշխվեն մյուս խմբերում՝ ըստ խմբերի առաջնահերթության: Տարբեր խմբերի պահանջներին բավարարող փաստաբանը կարող է Շահառու հանդիսանալ միայն մեկ խմբի համար:
9. Շահառու կարող է լինել Երևան քաղաքում հաշվառված և գործունեություն իրականացնող փաստաբանը, ով մինչև 2016 թվականի փետրվարի 15-ը դիմել է Հանձնաժողովին և Հանձնաժողովի կողմից ընդգրկվել Շահառուների ցուցակում:

10. Շահառու չի կարող լինել այն փաստաբանը, որն ունի անդամավճարի չմարված պարտավորություն: Փաստաբանների պալատի աշխատակիցը կամ մարմնի անդամը նույնպես չի կարող լինել Շահառու:
11. Շահառու հանդիսացող փաստաբանի արտոնագիրը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ կասեցման կամ դադարեցման պահին չմարված կանխավճարը փոխանցվում է սույն կարգին համապատասխան որոշված մյուս փաստաբանին: Սույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ Շահառու հանդիսացող փաստաբանը անդամավճարից լրիվ կամ մասնակի ազատվելու արտոնություն է ձեռք բերում:
12. Շահառուների ցուցակի հիման վրա Շահառուին հանձնվում է «**փաստաբան Եզեգելյանի 2016 թվականի թոշակ**» անվանումով հավաստագիր:

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 20-ից:
14. Հանձնաժողովը սույն կարգի համաձայն հաշվարկ կատարելու ժամանակ կոտորակային միավորներ ստանալու դեպքում դրանք կարող է կլորացնել:
15. Սույն կարգով նախատեսված Շահառուների ցուցակը պետք է ներկայացվի մինչև 2016 թվականի փետրվարի 20-ը:
16. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *